

գալ տուեց, քրիստոնէութիւնն էր որ տուեց մեզ լուսաւորութիւն, գիր, մատենագրութիւն: Եւ այս մի առանձնական երեւոյթ չէ, բոլոր նոր ազգերը քրիստոնէութիւն ընդունելով՝ ձեռք են բերել և իրենց ազգային գրերն ու մատենագրութիւնը: Մինչև անգամ յանդուգն է թուում իսկ՝ պնդելը որ մենք նոր ազգ ենք, այն մտքով ինչպէս նոր են անուանուում եւրոպացի ազգերը, և ոչ ընաւ հին քաղաքակիրթ ազգ: Երեւակայեցէք մի քաղաքակիրթութիւն, որ սեպհական գիր չունէր և պահանջ էլ չուներ ունենալու: Իսկ եթէ ազգերի հնութիւնը պէտք է հաշուել առանց քաղաքակիրթութեան, այլ միայն օտարների յիշատակութեամբ, կամ կիսակիրթ թագաւորների և իշխանների անուանց ցուցակով՝ աւանդուած մեզ նոյնպէս օտարներից, այն ժամանակ շատ ուրիշ վայրերի ցեղեր, ինչպէս օրինակ քրդերը, կարող են մանել հին քաղաքակիրթ ազգերի շարքը: Բայց թողնենք այս ամէնը: *

Զրպարտելով Գրիգոր Լուսաւորին չէ կարելի պատմական ճշմարտութիւնը փոխել, և այս երկտողս գրել ոչ թէ Լուսաւորին պաշտպանելու մտադրութեամբ, ոչ թէ կրօնասիրական ձգտումներով դրդուեցայ, այլ միայն ցոյց տալու համար այն բազմութիւ առասպելներից մէկը, որոնցով լիքն են դժբաղդարար մեր պատմութիւնը, մեր դրպրոցական դատագրքերը, այսպէս անուանուած նոր հետազօտութիւնները, որոնցից սակայն իրաւունք ունինք աւելի շրջահայեցողութիւն և փոքր ինչ աւելի տրամաբանութիւն պահանջել:

Կարող ենք ասպահով լինել, որ Գրիգոր

* Իրիւ ապացոյց նախաքրիստոնէական հայ գրականութեան սովորաբար յառաջ են բերուում Փիլաստրոսի լաւ հասկացում և կասկածնէլ զոյցօ, Կորնիւից և Ղազարից վատ ընթերցումներով սխալ և թերատ, մութ և հակասական հատուածներ և մասնաւոր՝ o sancta simplicitas! Ազգամագիղոսի նշնագրերը, Եւսեբիոսի այդ մի հասարակաց տեղի է բոլոր վազք սրբոցներում:

Լուսաւորիչը ոչ գիրք է այրել, ոչ գիր է ջնջել և ոչ գրականութիւն:

Գ. Տ. Մ.

ԹՈՆԳՐԱԿԵՑԻՔ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ՝ ասուածարանութեան և փիլ. պատկաւորի Էջմիածնի սարկաւազ ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆԻ [Die Thondrakier in unsern Tagen, von Lic. Dr. Karapet Ter-Mkrtschian, Archidiakonus in Edschmiatzin. Zeitschr. f. K. G. XVI, 2. Կր. 253—27.]


«Պաշտօնականները բիւզանդական կայսրութեան մէջ և նման հերետիկոսական երեւոյթներ շայտատանում, վերնադրով իւր շարադրութեան իբրև լրացումն կարապետ սարկաւազը (այժմ վարդապետ) առաջ է բերել գերման սկան Վիկեդեցական պատմութեան ամսագրում» մի համառօտ տեսութիւն այն հայ անդանդաւորների մասին, որ դարուս սկզբում առանձին հոգսեր պատճառեցին Ս. Էջմիածնի հոգևոր վարչութեան: Այդ անդիւնը և նրա հեռեկոյնների մասին առաջին անգամ խօսել է պ. Ա. Երիցեանը «Փորձ ամսագրի 1880 հոկտեմբերի համարում: Այս ընդարձակ յօդուածըն է ծառայել հեղինակիս համար իբրև աղբիւր: Հայ ընթերցողներին արդէն իսկ ծանօթ են Շիրակի Արևիկ զիւզի հերետիկոսների պատմութիւնն և Էջմիածնի սինոդի երկարատե քննութիւններն այդ մասին: Պ. Երիցեանն իւր վերոյիշեալ յօդուածի համար նիւթերը քաղել է ս. Էջմիածնի զիւանի հնագարանից, այժմ կարելի է թերևս աւելի նիւթեր գտնել այդ մասամբ դեռ մութը մնացած խնդրի լուսարանութեան համար, սակայն այն նիւթն ևս, որ արդէն հրատարակուել է, բաւական է որոշ եզրակացութիւնների հասնելու համար: Հ. կարապետի ձեռնարկութիւնը, որ վերաբերում է Հայաստանում եղած անդանդների հետաքննութեան, սխալմ է քրիստոնէութեան մեր երկրում հաստատուելու օրերից և հասնում մինչև մեր ժամանակը: գիտնական հեղինակի ջանքն է այն ընդհանուր կապն ապացուցանել, որ կայ Մեսաղե-

նականութեան [տես Արարատ 1895. № 2] Պաղկեկեանց թանգրակեցոց և ուրիշ հայկական աղանդների մէջ:

Մեր անձակ եկեղեցական պատմութեան մի այդպիսի մեծակշիռ հետազոտութիւն մեծ ծառայութիւն պիտի անէ անշուշտ գծարդարար այդ հետազոտութեան հայերէն թարգմանութիւնը զեռ ևս լոյս չէ տեսել որ շատ ցանկալի է:

Նոր թանգրակեցիների մասին այս փոքրիկ հետազոտութիւնը երեք մասից է բաղկացած. առաջին մասում հեղինակը ծանօթացնում է խնդրի պատմութեան հետ, երկրորդում առաջ է բերում այդ աղանդի հաղորդակիցների ցուցումներն և նոր աղանդապետ Յովհաննիսի կենսագրութեան և նրա աղանդի հիմունքների քննութիւնը, երրորդ բաժինը թարգմանութիւն է «Բանալի ճշմարտութեան» գրքի, որ նոր թանգրակեցիների վարդապետարանն է եղել:

Հետազոտութեանս ամէնից հետաքրքրական և պատմութեան համար նշանակութիւն ունեցող մասն է այս նոր աղանդի հիմնադրի կեանքի և վարդապետութեան քննութիւնը և այս աղանդի կրկին զօրանալու պատճառների հետազոտութիւնը (եր. 263—264): «Բանալի ճշմարտութեան» գրքի թարգմանութիւնը լուսարանուած է կարևոր ծանօթութիւններով:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՁԱՅ
ՆԱԵԼՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԵՅՈՒՄ:

Անգլիացոց գործնականութիւնը առած է դարձած: Անգլիական գործնական ուղղութիւնը արդէն նշմարուում է նրանց կեանքի ամէն մի ասպարիզում, այստեղ առաջ ենք բերում՝ անգլիական դպրոցական կեանքի մի երևոյթը, որ նոյնպէս իւր վրայ կրում է գործնականութեան գրօշմը: Մինչ-

զեռ եւրոպական այլ ուղգերը զեռ ևս խաբխափում են մանկավարժական փորձի շրջանում, անգլիացիք վաղուց արդէն վճռել են մի շատ նշանաւոր մանկավարժական խնդիր, ժողովրդական դպրոցների ուսուցիչ պատրաստելու խնդիրն, իրենց յատուկ եղանակով, որ իրատական և օրինակելի կարող է լինել և մեզ համար:

1846-ին Անգլիացիք ոչնչացրին Վանկաստերեանս փոխադարձ ուսուցման եղանակը և առաջուայ մանուսորների տեղը բռնեցին աշակերտ ուսուցիչները: Ահա թէ ինչպէս են պատրաստում նրանք ժողովրդական դպրոցների համար ուսուցիչներ:

Ժողովրդական եօթն դասարանեան ուսումնարանի դասընթացը աւարտելուց յետոյ՝ աշակերտը կարող է մնալ նոյն դպրոցում՝ աշակերտ-ուսուցիչ և ուսուցիչներին օգնել, որքան կարող է: Իւրաքանչիւր փորձուած ուսուցչի ձեռքի տակ կարող են լինել երեքից ոչ աւելի աշակերտ—ուսուցիչ: Այդ պատանիները վարժուում են ուսուցչի հրահանգով թեան տակ դասաւանդութեան և այլ դասարանական պարապմունց և ամենայն տարի ենթարկուում են քննութեան: Սկզբում այդ պատանիները ամբողջ շաբաթը պարապում էին դաս տալով, բայց այդ ընթացքում նոցա աշխատանքը թեթեւացրին, այժմ նոքա միայն շաբաթուայ կէտը նուիրում են այդ գործին, իսկ մնացած ժամանակը նոցա միջոց է տրուում իրենց զարգացման համար աշխատելու: Չորս տարի նոքա մնում են այդ կոչման մէջ, ստանալով կառավարութիւնից փոքրիկ ուսձիկ, նրանք ամէն տարի ենթարկուում են քննութեան և իւրաքանչիւր յաջող քննութիւն տուող աշակերտի համար դպրոցը նըպաստ է ստանում:

Քննութեան աւարկաներն են. անգլիերէն թուաբանութիւն, հանրահաշիւ, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, նկարչութիւն, բարոյաբանութիւն, քննուողը ընտրում է նաև մի հին կամ նոր լեզու: